

տեսեր և ոչ զգիրն: Եթէ այս տնհաւանելի
թուեցի քեզ, ի գալստեան քում լուրցես
յայլմէ զստուգութիւն իրին: Ապա եթէ
վարդապետի կողմանէ ասիցես՝ թէ ի Ղօն-
հայու ընդէ՞ր մեզ կրկին զիր չհտուր, նո-
րա պատճառն այն էր, որ մեք ի ճանա-
պարհին լուաք զքէն՝ թէ վարդապետն էջ-
միածին գնաց ուրախութեամբ. ընդ այն
ևս տրամեցաւ՝ թէ ընդ որ որ գիմեմք,
բան յառաջ չի գնար. և թէ այլ կողմանէ
բանիւ մի՞ մեղադրեսցես. յայտնապէս ա-
սեմք քեզ, սիրելի՛, անմեղադիր լի՛ր, մի-
թէ դու զվարդապետի բնութիւնն չե՞ս զի-
տեր: Եթէ դու որ համասուն և համչիրակ
և զշարժմանց նորին տեղեակ զօրով մե-
ղադրեսցես, ապա զանձանօթ մարդիկն ո-
րով րանիւ հաւանեցուցուք: Եթէ այս-
պիսի զօժարութեան ժամանակիս որ մեք
ըստ մերոյ կարողութեանն ջան ու զայրաթ
որ չառնեմք, այլ ո՛ւր կու երևի մեր քը-
րիստոնէութիւնն, թո՛ղ թէ զկարգ աստի-
ճանաց: Եթէ այն տեղացն որ զրկեցիմք՝
այլ ո՛ր բերանով զԲրիտանի տնօրէնու-
թիւնն քարոզեմք: Եթէ զլուսաւորչաչէն
տաճարքն որ կորուսանեմք, այլ ե՛րբ կա-
րեմք ասել՝ թէ Լուսաւորչի ազգ էմք: Յե-
րեսս անկեալ աղաչեմ, ո՛վ սիրելի, ի հա-
սանել գծոյս վազվազակի ելեալ գայցես առ
մեզ: Մեք ամենեքեանքս պարտ էաք յերես
ի քաջ գալ առ սրբութիւնդ, բայց ի մէջ
եկեալ եղբարքն առ մեզ փոխան համարի-
չիր: Աղաչեմք զքեզ, սիրելի՛, որ զխնդի-
րըս մեր անտես չառնես. չուտով ելեալ
գայցես, որ միաբանեալ ի միասին հոգեով
և մարմնով և կապակցեալ սիրով՝ մտանեմք
ի հանդէս մարտին, եթէ Տէր կամեցի-
նախ՝ վասն հաւատոյս հաստատութեան
քրիստոնէից, երկրորդ՝ վասն Սուրբ Տե-
ղաց զրկումն ածցուք ի միտ, երրորդ՝ վասն
նախատինս լինելոյ ի մէջ այլադաւան ազ-
գաց, չորրորդ՝ վասն վարդապետի ձերու-
թեանն խնայելով, զի մի՛ սգով հանդերձ
իջցէ ի չիրմի: Վասն այսքան պատճառաց,
սիրելի՛, փութաջիր գալ առ մեզ, զոր
Տէր Յիսուս արիացուցէ զքեզ ի յովի: Ող-
ջունեալդ ի Սուրբ Հոգւոյն ողջ լի՛ր ի Տէր:
Բաւեցի ըստ անբաւ իմաստութեան քո:
Դրեցաւ Տնօրինի օրն կիրակէի [1656
Յունուար 13]:

Բ

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ(*) ձեռագիրն Է.

Պատճառ ձեռագրիս այս է: Ես Աս-
տուածատուր վարդապետս առաջնորդ Ս.
յնրուսաղէմոյ եզի փոխան յանձին իմոյ
գտնիկի եղբայրն իմ զՏէր Եղիազար վար-
դապետն և մեր որդի Մարտիրոս վարդա-
պետն, զի երկոքեան սոքա միաբանեալ
զամենայն գործառութիւնս մեր կատարես-
ցին մերով կամակցութեամբ, զի սոցա ա-
բարեալն ինձ հաճելի և հաւանելի է: Այլ
և սակա ի Սուրբ Ծննդեան դրանն և ի լու-
սոյն ի միասին մտանելոյ ընդ Յունաց ազ-
գին, և թէ այլ սոյնպիսեաց թէ հարկ լիցի,
ամ յամէ հանապազորդ հարկս տալոյ ի
դրունս արքունի՝ ևսու հրաման մինչ զի
տարեանն հազար ղուրուչ և կամ սուղ ինչ
աւելի կամ պակաս՝ ըստ պատշաճի աջող-
մանն: Եւ ի վերայ յայսմ իրի ով ոք չու-
նի հրաման հակառակելոյ՝ թէ՛ ի մերայնոց,
թէ՛ ի յօտարաց, զի այսու պատճառաւ
բարձրացի եղջիւր ազգիս մերոյ համար-
ձակ ունելով զսուրբ տնօրինական տեղիսն
Քրիստոսի: Եթէ ոք տգիտարար ընդդի-
մացի գործոյս այսմիկ, զոչ տոնելն յօ-
գուտ համարեալ, այնպիսին հակառակ է
մեզ և առիթ խանգարման վիճակին Հա-
յոց. և յօժարութեամբ կամակցողքն օրհ-
նեալ լիցին յԱստուծոյ և ամենայն սրբոց
նորա, նաե ի մէջջ. ամէն: Դրեցաւ ձեռա-
գիրս ի թվին ՌՃԵ (= 1656) ամին և Մար-
տի ամսոյն 4. օրն Երեքշաբթի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԱՆՐՈՒՔ

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Լ

Ի՞նչ է նշանակում «մխիթարել». ո՞րն
է այս բայի բուն իմաստը:

Ս. Դրքի վրացերէն թարգմանութեան
մէջ, որ կատարուած է հայերէնից, Յիսու-
սի տուած երկրորդ երանութիւնը (Մատթ.
Ե. 4), որ ասում է. «Երանի սգաւորաց,
զի նոքա մխիթարեսցին»՝ վրացին «մխի-
թարեսցին» բայը թարգմանած է չրջումով
և գրած է. «նուգէշինիս-ցէմու իշիլէն»,

(*) Աստուածատուր Տարօնեցի Պատրիարք
Երուսաղէմի. Ծան. Հրատ.

որ նշանակում է «մխիթարում պիտի լինին»։ «Նուգէշինիսցէմուլ», որ նշանակում է «մխիթարում», բարդ բառ է եւ տրոհելի է իբր «նու+գէշինիս+ցէմուլ» եւ բառացի նշանակում է. «մի վախենար ստացած»։ «Նուգէշինիսցէմա-յ» նշանակում է. «մխիթարել» (բառացի. «մի վախենար տալ»)։ «Նուգէշինիս մցէմէլի» նշանակում է «մխիթարիչ» (բառացի. «մի վախենար տուող»)։ Այսպիսով երկրորդ երանութեան վրացերէն թարգմանութիւնը եթէ բառացի տանք հայերէն, պիտի գըրենք. «Երանի սգաւորներին (խկապէս՝ «երանեալ են սգաւորները»), որովհետեւ նրանք մի վախենար ստացած պիտի լինին»։(*)

Վրացերէն բառի կազմութեան շուրջով կարելի է հասնիլ մեր «մխիթարել» բառի նախաւոր իմաստին։ Մեր բառի բունն է մխիթար, որ արտաբերում ենք. մխիթար։ Այս բառի առաջին ծածուկ վանկի մէջ, որ է մը՝ սղած է մի հին ձայնաւոր. կարծում եմ մի ի։ Վերականգնելով այդ ձայնաւորը, մենք կը ստանանք բառի նախաւոր ձեւը իբր «միխիթար», որ ես տրոհում եմ իբր «մի՛ խիթար»։ «Խիթալ» նշանակում է. «կասկածել, վախենալ» եւ ուրեմն մի՛ խիթար պիտի նշանակէ, «մի՛ կասկածիր, մի՛ վախենար» որ լիովին նոյն իմաստըն ունի ինչ որ վրացերէն «նուգէշինիս» բառը։ Այսպիսով «մխիթարել» բառի բունը, որ է «մխիթար»՝ մի հին քարացած հրամայական ձեւ է, որ սղած ու քարացած է նախադրական շրջանում. մի՛ խիթար՝ մխիթար։ Մի՛ արդիական մակբայը մը ձեռով մենք այսօր հանդիպում ենք մեր բարբառների մէջ ոչ միայն ձայնաւորից առաջ ինչպէս «մը՛ներ, մը՛սեր» եւ նման ձեւերում, այլ եւ բաղաձայնից առաջ։ Գեւորցիի ասում է. «մը՛ կարթո, մը՛ գրի, մը՛ խուսէ, մը՛ թուզ» — այսինքն. մի՛ կարգար, մի՛ գրեր, մի՛ խօսիր, մի՛ թողուր։ Այսպիսով «մխիթարել» բառը կազմուած է հայ միջովայրում. իր կազմութեամբ նա նման է «քաջալերել» բային, որ այլ բան չէ քան «քաջ լի՛ր», այսինքն՝

«քաջ եղիր»։ «Մխիթարել» մէկին՝ նշանակում է ուրեմն ասել նրան. «մի՛ վախենար, մի՛ կասկածիր, ինչպէս «քաջալերել» մէկին՝ նշանակում է ասել նրան. «քաջ լիւր, քաջ եղիր»։ Միեւնոյն երանութեան յունարէն թարգմանութեան մէջ «մխիթարել» բայի յունական համարժէքն իր բունով նշանակում է «քաջալերել, սիրտ տալ» (παρά-καλέω — մխիթարել. παρά-καλῶς — քաջալերութիւն)։

Թւում է թէ վրացերէն բառը կազապարում է հայերէն բառի վրայ, ինչպէս օրինակ մեր «սուկերեան» բառը կազմուած է յունարէն բառի հետեղութեամբ։ Յոյն է, որ իր մեծատաղանդ քորոզլին անուանած է «սուկերեան» եւ սեղծած է այդ բառը. մենք բարգմանած ենք՝ յոյնին հետեւելով։ Այդպէս է կարծէք նաեւ վրացու պարագան։ Եթէ իրօք այդպէս է, ապա պէտք է կարծել, որ վրացի թարգմանիչը եւ անշուշտ իր ժամանակակից հայերը գիտէին, թէ «մխիթար» նշանակում է. «մի՛ խիթար», այլապէս այդ բառը չէր թարգմանի մի նորահնար բառով, որի իմաստն է «մի՛ խիթար, մի՛ վախենար»։ Իսկ եթէ «նուգէշինիս ցէմայ» — «մի՛ վախենար տալ» — «մխիթարել» ասութիւնը վրացերէնի մէջ գոյութիւն ունէր նախ քան Ս. Գրքի թարգմանութիւնը, այսինքն նա բնիկ էր եւ ոչ թէ մի նորահնար բառ՝ հայերէնի հետեղութեամբ կազապարում, ապա պէտք է կարծել, որ մարդկային նախնական մտածութիւնը «մխիթարել» բայի գաղափարին կցում էր մէկին «քաջ եղիր, մի՛ վախենար» տակու գաղափարը, ինչ որ անհնարին չէ, քանի որ միեւնոյն նախաւոր իմաստը մենք նկատում ենք թէ կայ թէ՛ վրացի եւ թէ՛ յոյն բառերի մէջ։

Այսպէս ուրեմն «մխիթար» բառը մի քարոցած հրամայական է, իր նախաւոր ձեւն է՝ «մի՛ խիթար», որ նշանակում է «մի՛ վախենար, մի՛ կասկածիր»։ «Մխիթարել» մէկին՝ նշանակում է նրան վստահութիւն եւ քաջութիւն ներշնչել, ասելով՝ «մի՛ խիթար, մի՛ վախենար»։

Այս է մեր բառի նախաւոր իմաստը։

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

(*) Տես, Ի Կիպլիճէ. «Հին գրական վրացերէնի ընթերցարան» (Ոստերէն)։ Հրատ. Պետգրատի համալսարանի արեւելեան լեզուների բաժնի. էջ. 1, 59,